

ԲԱՌԵՐԻ ՊԱՏՃԱՌԱԲԱՆՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԹԱԳՆՈՒՄԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

ՄԱՆՈՒԿ ՖԵԼԵԿՅԱՆ՝ 
Երևանի պետական համալսարան

Լեզվի պատմական զարգացման ընթացքում բաղադրյալ բառի իմաստաբանության, իմաստային կառուցվածքի մեջ հնարավոր են փոփոխություններ, որոնք կարող են հանգեցնել բառի բաղադրյալ կազմության ընկալման մթազնմանը, մինչև իսկ կորստին: Այս երևույթը կոչվում է ապապատճառաբանում (demotivation, демотивация):

Բաղադրյալ բառի բառիմաստի ձևավորման հիմքում միշտ էլ ընկած են ներքին ձևը և դրա հիման վրա նրա ունեցած պատճառաբանվածությունը: Բառի ներքին ձևը ցույց է տալիս բառի հնչման և իմաստի պատճառաբանված կապը, այսինքն՝ նշում է այն պատճառը, ըստ որի՝ տվյալ իմաստը արտահայտվում է հենց տվյալ հնչյունակապակցությամբ: Բաղադրյալ բառի ներքին ձևը կարող է լինել շատ հստակ, հեշտությամբ գիտակցվել այդ լեզվով խոսող հանրության կողմից: Այդպես է բաղադրյալ բառերի ճնշող մեծամասնության դեպքում:

Մակայն լեզվում որոշ պայմանների առկայության դեպքում բաղադրյալ բառերում մշտապես նկատվում է բառակազմական կապերի և բառային պատճառաբանվածության կորստի, մթազնման միտում: Երբեմն բառի ներքին ձևը գրեթե կորչում է, որի պատճառով էլ արդի լեզվաբանմամբ չի գիտակցվում բառի բաղադրյալ լինելը:

Հոդվածում քննվում են պատճառաբանվածության մթազնման, կորստի տարբեր փուլերում գտնվող բառեր և բաղադրյալ բառի ապաստուգաբանման հիմնական պատճառները:

Բանալի բառեր – բառի ներքին ձև, բառի արտաքին ձև, իմաստային պատճառաբանվածություն, կառուցվածքային պատճառաբանվածություն, պատճառաբանող հատ-

* **Մանուկ Ֆելեքյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի դոցենտ

Манук Фелекян – кандидат филологических наук, доцент кафедры армянского языка ЕГУ
Manuk Felekyan – Candidate of Philological Sciences, Associate Professor at YSU Chair of Armenian Language

Էլ. փոստ՝ feleqyanmanuk@ysu.am <https://orcid.org/0009-0008-3510-6426>



This work is licensed under a Creative Commons Attribution-Non-Commercial 4.0 International License.

Ստացվել է՝ 08.10.2025

Գրախոսվել է՝ 15.10.2025

Հաստատվել է՝ 06.11.2025

© The Author(s) 2025

կանիշ, ապապատճառաբանում, բաղադրյալ բառ և բաղադրող հիմք, բառապաշարի իմաստային տեղաշարժեր, կառուցվածքի պարզեցում կամ վերատարադրում

Ներածություն

Բառի արտաքին ձևը, ինչպես հայտնի է, նրա հնչյունական կազմն է, հնչումը: Բառի ներքին ձևը լեզվաբանական գրականության մեջ բնորոշվում է իբրև «բաղադրյալ բառի իմաստային այն տարրերի ամբողջությունը, որոնցով բաղադրվում է նրա բառիմաստը»¹: «Բառի ներքին ձևը իրականում բառի հնչյունական կազմից բխող, բառի հնչյուններով պայմանավորված բովանդակությունն է»²: Բառի ներքին ձևը ցույց է տալիս բառի հնչման և իմաստի պատճառաբանված կապը, այսինքն՝ նշում է այն պատճառը, ըստ որի՝ տվյալ իմաստը արտահայտվում է հենց տվյալ հնչյունակապակցությամբ: Ըստ այդմ էլ ներքին ձև կարող են ունենալ միայն բաղադրյալ (ածանցավոր և բարդ) բառերը: Պարզ կամ այդպիսին ընկալվող բառերի ներքին ձևը հաճախ շատ դժվար է ճշտորեն որոշել:

Սա բառի պատճառաբանված կամ հիմնավորված (մոտիվացիա ունեցող) իմաստն է: Բաղադրյալ բառի բառիմաստի ձևավորման հիմքում միշտ էլ ընկած է ներքին ձևը: Սրանով է բացատրվում այն հատկանիշը (երբեմն՝ հատկանիշները), որի հիման վրա էլ առարկայի ճանաչման գործընթացում ստեղծվում է նրա (առարկայի, երևույթի) հասկացությունը³: Բաղադրյալ բառի ներքին ձևը կարող է լինել շատ հստակ և թափանցիկ, հեշտությամբ գիտակցվել այդ լեզվով խոսող հանրության կողմից, քանի որ իր նշանակության մեջ կա հղում լեզվում արդեն գոյություն ունեցող մեկ այլ անվանման, իմաստը պայմանավորված է այդ անվանումով⁴: Այդպես է բաղադրյալ բառերի ճնշող մեծամասնության դեպքում:

Սակայն ժամանակին դեռ Ա. Պոտեբնյան էր նկատել, որ բառը լեզվում կարող է գոյություն ունենալ, գործածվել նաև առանց պատճառաբանման: Ինչպես նշում էր լեզվաբանը, որոշ պայմանների առկայության դեպքում բաղադրյալ բառերում մշտապես նկատվում է բառակազմական կապերի և բառային պատճառաբանվածության կորստի, մթագնման միտում⁵: Լեզվում, առանձնապես բառապաշարի զարգացման գործում, նշանակալի դեր ունի անվանման կառուցվածքի մոռացման, թափանցիկության մթագնման երևույթը, որը կոչվում է ապապատճառաբանում (демотивация, demotivation) կամ ապաստուգաբանում (деэтимологизация, de-etymologization): Առաջիններից մե-

¹ **Աղայան Էդ.**, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևանի համալսարանի հրատ., Եր., 1984, էջ 30:

² **Սուքիասյան Ա.**, Ժամանակակից հայոց լեզու, ԵՊՀ հրատարակչություն, Եր., 1999, էջ 102:

³ Հմմտ. **Աղայան Էդ.**, նշվ. աշխ., էջ 32-33:

⁴ Հմմտ. **Кубрякова Е. С.**, Типы языковых значений. Семантика производного слова, издательство «Наука», М., 1981, с. 8:

⁵ Տե՛ս **Потебня А. А.**, Полное собрание сочинений. Том I, Одесса, 1922, էջ 169:

կը, որ նկարագրեց, անվանեց և սահմանեց ապապատճառաբանման երևույթը, Լ. Բուլախովսկին է: Դեռ անցյալ դարի կեսերին նա գրում էր. «Որևէ բառ [...] դեֆինիտիվացիայի ենթարկվելիս դադարում է նմանվել մեկ այլ բառի կամ բառերի, որոնց հետ այս կամ այն կերպ կապված էր, զրկվում է նրանց հետ միասին մեկ «բույնի» մեջ ընկալվելու ունակությունից և լեզվի բառապաշարային համակարգում դառնում է ավելի մեկուսացված»⁶: Նա առաջինը առանձնացրեց լեզվական այս երևույթի հետ կապված հիմնական խնդիրները, նշեց բառի ներքին ձևի մթագնմանը նպաստող գործոնները:

Երբեմն բառի ներքին ձևը մթագնում, գրեթե կորչում է, որի պատճառով էլ արդի լեզվաբանական մի գիտակցվում բառի բաղադրյալ լինելը: Պատճառաբանվածության մթագնման դեպքում պահպանվում է միայն ձևային պատճառաբանվածությունը, իսկ պատճառաբանող հատկանիշը և նշանակությունը լեզվակրի կողմից չեն գիտակցվում, կորչում են⁷:

Այս դեպքում փոխվում է բաղադրյալ բառի և այն բաղադրող հիմքի կապը, և, որպես հետևանք, բառի հնչյունական կազմի և նշանակության հարաբերությունը:

Ապապատճառաբանումը դինամիկ գործընթաց է, որի ժամանակ աստիճանաբար սկսում է մթագնել բառի ներքին ձևը, ինչը ի վերջո հանգեցնում է վերջինիս լրիվ կորստին, և բառը սկսում է չգիտակցվել իբրև բաղադրություն և անցնում է պարզ բառերի շարքը: Ներքին ձևի փոփոխությունները տեղի են ունենում թե՛ իմաստի և թե՛ ձևի մակարդակներում: Օրինակ՝ *ձեռնարկ* բառը արդի հայերենում հիմնական նշանակությամբ «մի դասագիրք [է] կամ այլ օժանդակ գիրք, որի օգնությամբ սովորում են»⁸: Այս բառի անմիջական կազմիչներից և ոչ մեկը չունի «գիրք» իմաստը, բառը չի պատճառաբանվում իր բաղադրիչներով: Հին, այսօր բառապաշարից դուրս եկած նշանակություններում ամբողջովին կամ մասամբ դեռ պահպանում էր պատճառաբանվածությունը՝ *«ՁԵՌՆԱՐԿ 1. Ձեռքը մի բանի վրա ձգելը, ձեռնարկություն: 2. Մի թղթի վրա ձեռք դնելը, ստորագրություն: 3. Ստորագրությամբ վավերացված պայման, հաստատության ուխտ: 4. Համաձայնության թուղթ»*⁹: Բառի ամենանախնական նշանակությունը լրիվ պատճառաբանված է. *ձեռնարկ* < *ձեռն*

⁶ Булаховский Л. А., Деэтимологизация в русском языке // История советского языкознания. Хрестоматия, изд. «Высшая школа», М., 1988, с. 238; տե՛ս նաև՝ Булаховский Л. А., Типы деэтимологизации в русском языке // История советского языкознания. Хрестоматия, М., 1988, с. 242-246.

⁷ Հմմտ. Чанчина А. В., Синхронный и диахронный подходы к изучению слов с десемантизированным корнем // Вестник Нижегородского ун-та им. Н. И. Лобачевского, 2008, № 4, էջ 193-196: // http://www.unn.ru/pages/issues/vestnik/99999999_West_2008_4/35.pdf

⁸ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հտ. 3, Հայկական ՄՄՀ ԳԱ հրատ., Եր., 1974, էջ 412:

⁹ Մալխասյան Ս., Հայերեն բացատրական բառարան, հտ. 3, Հայկական ՄՄԴ պետական հրատ., Եր., 1944, էջ 166:

(ձեռք) + *արկ* (արկանել «զցել, նետել, դնել» բայի արմատը), մյուս նշանակություններում ևս պատճառաբանվածությունը բավականին թափանցիկ է (նաև չորրորդում՝ «*համաձայնության թուղթ*» - թղթի վրա գրված համաձայնագիր, որը պայմանավորվող կողմերը ստորագրություն դնելով վավերացրել են):

Պատճառաբանվածության մթագնման տարբեր աստիճանները

Ապապատճառաբանումը լեզվում միանգամից տեղի չի ունենում, այլ բավականին երկարատև զարգացման արդյունք է: Ինչպես նշում է Գ. Ջահուկյանը, «բառերը իմաստապես անվերլուծելի միավորներ չեն: Լեզվի զարգացման յուրաքանչյուր տվյալ փուլում լինում են՝ ա) բառեր, որոնք այդ լեզվով խոսողների գիտակցության մեջ հանդես են գալիս որպես անվերլուծելի տարրեր, թեև պատմականորեն դրանք կարող են բաղադրի լինել, բ) բառեր, որոնք բաժանելի (վերլուծելի) են որոշ իմաստակիր, ինքնուրույնաբար հանդես եկող և չեկող տարրերի»¹⁰: Եվ քանի որ բառերը իրենց պատճառաբանված իմաստը միաժամանակ չեն կորցնում, լեզվում միմյանց կողքի գոյատևում են պատճառաբանվածության մթագնման, կորստի տարբեր փուլերում գտնվող բառեր: Կարելի է առանձնացնել պատրառաբանվածության մի քանի աստիճաններ՝ իրենց ենթատեսակներով՝ *լիովին պատճառաբանված բառեր, մասնակի պատճառաբանվածությամբ բառեր և ներքին ձևը կորցրած (լիովին ապապատճառաբանված) բառեր*:

Առաջին խմբում միավորվում են այն բառերը, որոնք լիովին պատճառաբանված են, ունեն թափանցիկ պատճառաբանվածություն: Այսպիսի բաղադրությունները հստակորեն բաժանվում են անմիջական կազմիչների, իսկ դրանց բառային իմաստը ամբողջովին բխում է իրենց բաղադրատարրերի նշանակություններից¹¹: Սրանց ներքին ձևը հստակ գիտակցվում է, պարզ է, թե ի՞նչ հատկանիշի հիման վրա է առարկան, երևույթը ստացել իր անվանումը: Բայց բառը սկսում է ձեռք բերել այնպիսի իմաստ(ներ) կամ ունենում է այնպիսի կիրառություն, որը հակասում է պատճառաբանվածությանը: Սա բառի պատճառաբանված իմաստի մթագնման գործընթացի սկզբնավորման նշան է¹²: Օրինակ՝ Երկրի հյուսիսային կիսագնդի բարձր լայնություններում, մերձբևեռային շրջաններում նկատվող մի մթնոլորտային երևույթի անվանումն է *հյուսիսափայլ*: Բազմաթիվ լեզուներում նրա անվանումն ունի միևնույն պատճառաբանվածությունը՝ ռուսերեն *северное сияние* (северный-հյու-

¹⁰ Ջահուկյան Գ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Հայկական ՄՄՀ ԳԱ հրատ., Եր., 1974, էջ 150:

¹¹ Հմմտ. *Кубрякова Е. С.*, Основы морфологического анализа: на материале германских языков, М., 2008, էջ 200:

¹² Հմմտ. *Маслова-Лапанская С. С.*, Лексикология шведского языка, Издательство Ленинградского университета, Ленинград, 1973, էջ 133-134; *Лукьянов Н.А.*, Нарушение семантической соотносительности между производными и производящими словами // Актуальные проблемы лексикологии (доклады 2-й лингвистической конференции), Новосибирск, 1969, էջ 17-25:

սիսային), գերմաներեն *das Nordlicht* (der Nord-հյուսիս), անգլերեն *aurora borealis* (boreal-հյուսիսային), իսպաներեն *aurora boreal* (boreal-հյուսիսային) և այլն: Միևնույն երևույթը ավելի ուշ հայտնաբերվել է նաև Անտարկտիկայում՝ Երկրի հարավային բևեռի շրջակայքում, սակայն անվանումը չի փոխվել¹³: Եվս մեկ օրինակ՝ *Գալիլեինոյի (Տաշիրի) շվեյցարական պանիր*: Բառը սկսում է գործածվել իր ներքին ձևին չհամապատասխանող իմաստով, որի պատճառով էլ ներքին ձևը սկսում է մթագնել: Այսպես, *թեյադրամ (թեյափող, թեյանվեր)* բառի ներքին ձևը այսօր լրիվ գիտակցվում է, սակայն բառն արդեն ուղիղ իմաստով («թեյի՝ թեյ խմելու համար տրվող դրամ») չի գործածվում և նշանակում է «դրամական նվեր՝ որևէ ծառայության՝ արարքի կն համար»¹⁴:

Երկրորդ խմբում՝ մասնակիորեն պատճառաբանված բառերում, բաղադրության ընդհանուր իմաստը լիովին չի բխում նրա առանձին բաղադրիչների նշանակություններից: Այս խումբը կարելի է բաժանել երեք ենթախմբի. ա) բառեր, որոնց բառակազմական հիմքը (պարզ հիմքի դեպքում՝ արմատը) հստակ գիտակցվում է և հանդիպում է բազմաթիվ բաղադրյալ բառերում, սակայն ածանցը քարացած է, անարտադրողական և կա միայն մեկ-երկու կազմություններում: Այսպես, *վայրագ* ածականում հստակորեն գիտակցվում է *վայր* «տեղ» արմատը, սակայն նրա արդի նշանակությունը («դաժան, անգութ, անազորույն»¹⁵) չի բխում իր բաղադրիչների իմաստներից (գրաբարում այս բառի իմաստը առավել պատճառաբանված էր՝ «վայրի տեղերում բնակվող, վայրենաբնակ»¹⁶, թեև կրկին անբացատրելի էր մնում *-ագ* ածանցը): Հմմտ. նաև՝ *նավաստի, տորմիդ, կավիճ, փտարանդի, սարավանդ*. սրանց արմատները հեշտորեն տարանջատվում են, իսկ ածանցները լեզվում ունեն եզակի կիրառություն: բ) Երկրորդ ենթախմբում ընդգրկված են այնպիսի բառեր, որոնք թեև կազմված են արտադրողական, կենսունակ ածանցներով, սակայն հիմքում ունեն հազվադեպ (երբեմն միայն տվյալ բառում) հանդիպող կախյալ արմատներ, որոնց նշանակությունը կարելի է պարզել միայն ստուգաբանությամբ, ինչպես՝ *բորենի, հրետանի, հրետավոր, աղեգործ, անկում, անկյուն, զեկույց, զրույց, զգեստ, համեստ* (բայց ունենք *պահեստ, գովեստ, ուտեստ*) և այլն: գ) Այս խմբում ընդգրկել ենք այնպիսի բաղադրություններ, որոնց հիմքերից (կամ արմատներից) մեկը լեզվում չունի այլ կիրառություն: Սրանց պատճառաբանման հատկանիշը հստակ չի երևում, այն միայն կարելի է ենթադրել կամ գուշակել բառի՝ խոսքում ունեցած կիրառությունից: Օրինակ՝ *զարտուղի* («1. ճանապարհից դուրս, ոչ բուն ճանապարհով, 2. կողմնակի, ա-

¹³ Այսօր մեր լեզվում, ինչպես և այլ լեզուներում, կերտվել է *բևեռափայլ* անվանումը, որը ավելի ճիշտ է արտացոլում երևույթի էությունը և չունի տեղային նեղ կոնկրետացում:

¹⁴ Հմմտ. *Մասլովա-Լաշանսկայա Մ.Ս.*, նշվ. աշխ., էջ 34:

¹⁵ *Աղայան Է.*, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976, էջ 1356:

¹⁶ *Ղազարյան Ռ.*, Գրաբարի բառարան, Եր., ԵՊՀ հրատ., 2000, էջ 498:

նուդղակի, ... 4. ոչ ուղիղ, նենգ, խորամանկ»¹⁷) բառի կառուցվածքից հասկացվում է, որ այն կապ ունի ինչ-որ ճանապարհի՝ ուղու հետ: Սակայն քանի որ առաջին բաղադրիչի իմաստը որոշակի չէ (արմատը լեզվում ոչ անկախ, ոչ էլ այլ բառերում կիրառություն չունի), բառն ամբողջությամբ պատճառաբանել իր բաղադրիչներով հնարավոր չէ. դրան գումարվում է նաև այն, որ երկրորդ բաղադրիչը գործածված է ոչ հիմնական, փոխաբերական իմաստով: Նմանապես, **քաջառողջություն** («լավ՝ լիովին առողջություն») բառը այսօր լրիվ պատճառաբանել իր բաղադրիչներով դժվար է. առաջին բաղադրիչը իր «լավ, հիանալի, ընտիր, հմուտ» իմաստները պահպանել է միայն բարդությունների մեջ (**քաջատեղյակ** «լավ տեղյակ, լավատեղյակ», **քաջահմուտ** «շատ հմուտ», **քաջաշնորհ** «շատ՝ մեծ շնորհքով օժտված, տաղանդավոր», **քաջատոհմ(իկ)** «լավ՝ ազնվական տոհմից սերված, ազնվատոհմ» և այլն):

Ապաստուգաբանման վերջին փուլը բառի ներքին ձևի լիակատար մթագնումն է: Այդպիսի մթագնում կա բազմաթիվ բնիկ հայերեն արմատական բառերում, որոնց պատճառաբանված կապը իրենց հնդեվրոպական նախահիմքերի հետ արդի լեզվում բոլորովին չի գիտակցվում և պարզվում է միայն հատուկ լեզվաբանական ուսումնասիրությամբ: Այսպես, ժամանակակից լեզվում (նաև գրաբարում) **մարդ** և **մատ** (**մատն**) բառերը արմատական են և միայն ստուգաբանությամբ է պարզվում դրանց կապը հնդեվրոպական նախահիմքերի հետ. **մարդ** բնիկ հնդեվրոպական *mr-to-՝ *mer- «մեռնել» արմատից (բուն նշանակությամբ՝ «մահկանացու»)՝¹⁸, **մատ(ն)** հնդեվրոպական *mæt- ձևից, որ ենթադրաբար հատկացվում է *m3- «չափ» արմատին (որպես չափ)՝¹⁹: Մրանք տարժամանակորեն են պատճառաբանված, իսկ համաժամանակյա մոտեցմամբ պատճառաբանված նշանակություն չունեն, պարզ բառեր են:

Ինչպես հայտնի է, անվանման հիմքում շատ հաճախ ընկած են լինում անվանվող սուբյեկտի ոչ միայն էական, հիմնական հատկանիշները, այլև պատահական հատկանիշներ, և որքան այդ հատկանիշը քիչ է գրավում խոսողի ուշադրությունը, քիչ է ուղղորդում նրա միտքը առարկայի, երևույթի և այլնի որևէ կողմի վրա, այնքան բառն ավելի լավ է կատարում իր անվանողական դերը²⁰: Այս տեսակետի կողմնակիցները երբեմն հասնում են ծայրահեղության: Այսպես, նրանք իրավացիորեն կարծում են, որ նոր բառերը իրենց տեղման շրջանում ոչ այնքան անվանում, որքան նկարագրում են առարկան: Բայց այդ նկարագրական փուլը վաղ թե ուշ հաղթահարվում է, և բառերը, եթե լեզվում գոյություն ունեն բավականին երկար ժամանակ, պատճառաբան-

¹⁷ Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, էջ 367:

¹⁸ Տե՛ս Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հտ. III, Երևանի համալսարանի հրատ., Եր., 1977, էջ 278-279; Զահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, «Ասողիկ», Եր., 2010, էջ 516:

¹⁹ Տե՛ս Զահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 514:

²⁰ Հմմտ. Մասլովա-Լաշանսկայա Ս. Ս., նշվ. աշխ., էջ 129:

ված բառ-նկարագրություններից վերածվում են անտարրալուծելի ամբողջության, դառնում են բառ-պիտակներ²¹:

Պատճառաբանվածության մթագնման և կորստի պատճառները

Պատճառաբանվածության մթագնման և կորստի պատճառները թե՛ լեզվական են և թե՛ արտալեզվական: Արտալեզվական գործոններին (հասարակարգում, նյութական կամ հոգևոր մշակույթում փոփոխություններ և որպես հետևանք՝ ժողովրդի մտածելակերպում տեղի ունեցող փոփոխություններ և այլն) չենք անդրադառնա: Առավել մանրամասն կքննենք լեզվական պատճառները, որոնք պայմանավորված են լեզվի զարգացման ներքին օրինաչափություններով և ընթացքով (փոփոխություններ հնչյունական, ձևաբանական, բառակազմական համակարգերում, իմաստափոխություն և այլն): Թվարկենք դրանցից հիմնականները:

1. Բառի արտաքին ձևի՝ հնչյունական կազմի փոփոխում, որի պատճառով բառը կորցնում է կապը նույնարմատ այլ բառերի հետ կամ էլ չի գիտակցվում որպես բաղադրյալ կազմություն: Բառիմաստի մթագնումը կամ ապաստուգաբանությունը հիմնականում տեղի է ունենում հնչյունափոխությամբ: Հաճախ սրան գումարվում են նաև պատճառաբանող հիմքի իմաստային փոփոխությունները: Այսպես, հնչյունական տարբեր փոփոխությունների պատճառով այսօր սովորական հայախոսի համար, ասենք, **ընկեր, ընկճել և ցրցամ (տալ)** բառերը ընկալվում են իբրև պարզ, արմատական ձևեր. հնչյունափոխությունների պատճառով կապը բաղադրության հիմքի հետ մթագնել է, այսօր չի գիտակցվում սրանց առնչությունը ստուգաբանական արմատների հետ. *ճկել* «թեքել, ծռել, կորացնել» > *կճել* (դրափոխություն), որից *ընդ + կճել* > *ընկճել* (*դ+*, հնչյունի կորուստ), *ընկեր* < *ընդ + կեր* (նույն *դ*-ի անկումով, ինչպես նախորդ դեպքում), *ցրցան (տալ)* > *ցրցան* > *ցրցամ*: Այս բառերում կատարվել է կազմության պարզեցում: Հետևյալ դեպքերում պարզեցումը մինչև վերջ չի կատարվել, լիակատար չէ: **Սեփական** բառը մի քանի հնչյունափոխությունների պատճառով կորցրել է կապը *սեպուհ* արմատի հետ, թեև նրա բաղադրյալ լինելը հստակ գիտակցվում է, քանի որ կազմված է *-ական* խիստ արտադրողական վերջածանցով (*սեպուհ + ական* > *սեպուհական* > *սեպական* > *սեփական*): **Հիսուն** և **վաթսուն** թվականներում նույնպես թուլացել է կապը նախահիմքերի հետ (հնչյունների կորստի և պարզեցման պատճառով), թեև այստեղ ևս չկա լիակատար մթագնում (նաև *-ուն* ածացի շնորհիվ, որը կերտում է միայն թվականներ):

²¹ Այս մասին տե՛ս **Торопцев И. С.**, Лексическая мотивированность (на материале русского литературного языка) // Орловский государственный педагогический институт. Ученые записки, том XXII. Орел, 1964, էջ 134:

Այս երևույթը շատ է տարածված անձնանունների կրճատ, փաղաքշական տարբերակներում, որոնցում գրեթե մթագնած է ներքին ձևը, ինչպես՝ **Աստ-վաճատուր** («Աստծու տված, Աստծու պարգևած») և **Ասճատուր**, **Ասվատուր**, **Ասպատուր**, **Աստատուր**, **Ասատուր**, **Աստուր**, **Աստիկ**, **Աստ**, **Ասի**, **Ասպրո**, **Ասրո**, **Ասուլ**, **Ծատուր**, **Ծատի**, **Տատուր** (սրանցից երկուսը՝ **Ասատուր** և **Ծատուր**, վաղուց գիտակցվում են իբրև ինքնուրույն անձնանուններ, որոնցից կազմվում են նաև ազգանուններ՝ **Ասատրյան**, **Ծատուրյան**, ունենք նաև՝ **Տատուրյան**): **Անդրանիկ** («ավագ, երեց, նաև մեծ») և **Անդո**, **Անդրան**, **Անդրիկ**, **Անդիկ**, **Անդրի**, **Անդրո**: **Անթառա՛** («չթառամող, մշտադալար») և **Թառո**, **Թառուկ** և այլն:

2. Ներքին ձևի կորստի մյուս տարածված պատճառը պատճառաբանող բառի հնացումը և բառապաշարից դուրս գալն է: Բացի վերոհիշյալ **զարսու-դի** բառից բերենք ևս մի քանի օրինակ: Արդի հայերենում **ամբարիշտ** ածականը պարզ է և հետևաբար չի կարող ունենալ ներքին ձև: Իրականում այն ունեցել է պատճառաբանված իմաստ. բառի ստուգաբանությունը պարզելիս երևան է ելնում նաև նրա ներքին ձևը. **ամբարիշտ** < **ան-** (ժխտական նախածանց) + **բարիշտ** < **ան** + **պարիշտ**. **պարիշտ** այսօր անգործածական արմատից, որից ունենք **-պաշտ**, **պաշտել**. **ամբարիշտ**՝ բուն իմաստով՝ անպաշտ «հավատք, օրենք չճանաչող»²²: **Ցանկ** («1. Գրքի գլուխների՝ մասերի ևն ցուցակ, բովանդակություն, որ սովորաբար կցվում է գրքի վերջից: 2. Որևէ բանի ցուցակ») բառը տարժամանակյա մոտեցմամբ նույնպես բաղադրյալ է և ունի ներքին ձև. կազմված է **անկ** («անկանիլ») բայարմատից՝ **ց-** նախդիրով: Անկ արմատը թեև առանձին ավանդված չէ, բայց ունեցել է «ծայր, վերջ» իմաստները (ասենք, **հանց** (<**յանց** < **յանկ** < **յ** + **անկ**) բառում): Ի դեպ, ծագումով սրան է նույնանում ժամանակակից հայերենի բառարաններում իբրև համանուն ներկայացվող **ցանկ** «ցանկապատ» բառը. **ց** + **անկ** «ճյուղերով ևն հյուսված պատ՝ պատնեշ (իբր վերջ կամ սահման)»²³: **Հլու** (< **h** (**հու**) + **լու** (**լսել** բայի արմատը)) բառը ևս այսօր ըմբռնվում է որպես պարզ բառ, քանի որ նրա **լու** արմատն այդ տեսքով ինքնուրույն կիրառություն չունի²⁴: **Հարկ** («շենքի մեկ հարթության վրա գտնվող մասերի՝ սենյակների ամբողջությունը») բառում չի գիտակցվում կապը **արկանել** այսօր բառապաշարից դուրս մնացած բառի հետ (նաև առկա հնչյունափոխության և հետագայում նաև ուղղագրության փոփոխության պատճառով՝ **հ** + **արկ** > **յարկ** > **հարկ**):

Այսօր մթագնած պետք է համարենք նաև **փողոց** բառի ներքին ձևը: Թեև բառակազմորեն դեռ գիտակցվում է այս բառի վերջածանցավոր լինելը (**փող** + **ոց**), սակայն դրանում չի պահպանվել արմատի նախնական իմաստը՝ «նեղ

²² Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, Երևանի համալսարանի հրատ., հտ. I, Եր., 1971, էջ 149, և հտ. IV, Եր., 1979, էջ 23:

²³ Նույն տեղում, հտ. I, էջ 197-198:

²⁴ Տե՛ս նույն տեղը, հտ. III, էջ 103:

անցք»: Այս բառի ներքին ձևը դեռևս նկատելի էր հնագույն՝ գրաբարյան իմաստներում. «1. Այգիների միջև նեղ ճամփա: 2. Երկու շարք կանգնած մարդկանց միջև բաց թողված ոչ լայն տարածությունը, որով շքադիր անձը պիտի անցներ»²⁵, Նոր հայկազյան բառարանում՝ «Ճանապարհիք քաղաքի. անցք. ուղի հրապարակաց»²⁶: Պահպանելով բառակազմական պատճառաբանվածությունը՝ կորցրել են իմաստաբանական պատճառաբանվածությունը նաև *մրցամարտ*, *մրցում*, *մրցություն* բառերը. սրանց մեջ *մրց-* (*մուրց*) «կռուփ, բռնկնցք» արմատն արդի հայերենում անգործածական է: *Նետել* բայի իմաստափոխության մեջ առկա է նույն երևույթը: Թեև արդի հայերենում գիտակցվում է նրա բաղադրյալ լինելը, և այն բառակազմորեն վերլուծելի է (*նետ + էլ*), բայց այս բառն այսօր կորցրել է իր ներքին ձևը. այն հնարավոր չէ մեկնել իր արմատի միջոցով: Արդի հայերենի ոչ մի բացատրական բառարանում *նետել* բառի որևէ իմաստ չի բացատրվում *նետ* բառի միջոցով: *Նետ* և *նետել* բառերի միջև խզվել է իմաստաբանական կապը: Նոր հայկազյան բառարանում բառն ունի պատճառաբանված իմաստ և ներքին ձև. «ՆԵՏԵՄ Ձգել գնետ, զքար և զամենայն ինչ ձգելի»²⁷: *Չմերուկ* բուսանունը (*n > p* հնչյունափոխության պատճառով) այսօր չի կապվում *ձմեռ(ն)* արմատի հետ: Դրան է նպաստել նաև իմաստային անցման անորոշությունը²⁸:

Սրանց մասամբ նմանվում է (թեև ինչ-որ չափով հակադիր է) *ամուսին* բառի բառակազմական և իմաստաբանական պատճառաբանվածությունների հարաբերակցությունը: Այս բառի առանձին բաղադրիչները՝ *ամ* (< *համ* «համատեղ, միասին, կից»), *ուս* «վարժվել, սովորել» (*ուսանել*, *ուսյալ* բառերի արմատը) և *-ին* մասնիկ, այժմ էլ հայերենում գործածական են, սակայն մթագնել է բառի բաղադրյալ կազմությունը. այն ընկալվում է որպես պարզ բառ և հետևաբար արդի հայերենում չունի ներքին ձև: Նույն ձևով արդի լեզվում դեռևս մասամբ գիտակցվում է *առակ* (*առ + ալ*)²⁹, *առած* (*առ + ած*)³⁰, *արկած* (*արկ + ած*)³¹ և այլ բառերի բառակազմական տարրալուծելիությունը, սակայն սրանք կորցրել են իրենց ներքին ձևը և համաժամանակյա մոտեցմամբ պետք է դիտվեն պարզ բառեր:

Այսպիսով, բառերն ըստ ձևաիմաստային պատճառաբանվածության բաժանելիս մենք կունենանք երկու ծայրակետեր, բևեռներ՝ լեզվի արդի փուլում պատճառաբանված իմաստ ունեցող բառեր (բաղադրյալ բառերի ճնշող մե-

²⁵ Նույն տեղում, հտ. I, էջ 502-513:

²⁶ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Երևանի համալսարանի հրատ., հտ. II, Եր., 1981, էջ 952:

²⁷ Նույն տեղում, էջ 414:

²⁸ Հր. Աճառյանը կարծում է, որ այդպես է կոչվել իր առատ գովացուցիչ ջրի պատճառով (նույն իմաստային անցումը կա նաև վրացերենում, ենթադրաբար՝ թուրքերենում): Տե՛ս Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հտ. III, էջ 156-157:

²⁹ Տե՛ս Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հտ. I, էջ 249-250:

³⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 249:

³¹ Տե՛ս Զահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 91:

ծամասնությունը) և ներքին ձևից զուրկ բառեր (պարզ բառեր, փոխառություններ): Այսպես է համաժամանակյա մոտեցման դեպքում: Տարժամանակյա ուսումնասիրություն կատարելիս առանձնացվում են նաև միջանկյալ օղակներ: Դրանցից առաջինը բառակազմորեն տարրալուծելի, հատվածների բաժանվող այն բառերն են, որոնք մասամբ կամ լրիվ կորցրել են կապը իրենց ստուգաբանական արմատի (հիմքի) հետ: Մյուս խմբի մեջ այն բառերն են, որոնք արդի լեզվաընկալմամբ չեն ըմբռնվում իբրև բաղադրյալ և հետևապես պատճառաբանված իմաստ ունեցող բառեր, սակայն որոնց ներքին ձևը կառուցվել է վերականգնել ստուգաբանական վերլուծությամբ:

Բառի պատճառաբանված իմաստի մթագնումը կամ լրիվ կորուստը նպաստում է բառիմաստի հետագա զարգացմանը, հնարավորություն է տալիս բառին ձեռք բերելու նոր (մեծ մասամբ փոխաբերական) իմաստներ, քանի որ վերանում է բառաբաղադրիչներով պայմանավորված իմաստային սահմանափակումը:

МАНУК ФЕЛЕКЯН – *Затемнение мотивированного значения слов в армянском языке.* – В процессе исторического развития языка возможны изменения семантической структуры составного слова, что может привести к затемнению восприятия сложной структуры слова, вплоть до её утраты. Это явление называется демотивацией.

Формирование значения сложного слова основано на его внутренней форме и его мотивации. Внутренняя форма составного слова может быть очень ясной и легко понятной для носителей данного языка. Это относится к подавляющему большинству сложных слов. Однако при определённых условиях в языке наблюдается тенденция к затемнению и утрате как словообразовательных, так и смысловых связей внутри составного слова. Иногда внутренняя форма практически утрачивается, из-за чего не осознаётся составная природа слова.

В статье рассматриваются основные причины и стадии демотивации значения слов в армянском языке.

Ключевые слова: внутренняя форма слова, внешняя форма слова, семантическая мотивация, структурная мотивация, мотивирующий признак, демотивация, семантические сдвиги лексики, опрощение и переразложение

MANUK FELEKYAN – *Demotivational Meaning of Words in the Armenian Language.* – During the historical development of a language, the semantic structure of a compound word can change, which can lead to a blurring of the word's complex structure, even to its loss. This phenomenon is called demotivation.

The formation of the meaning of a compound word is based on its internal form and its motivation. The internal form of a compound word can be very clear and easily understood by native speakers of a given language. This is true for the vast majority of compound words. However, under certain conditions, language tends to obscure and lose both the word-formation and semantic connections within a compound word. Sometimes, the internal form is virtually lost, resulting in a loss of understanding of the compound nature of the word.

This article examines the main reasons and stages of demotivation of the meaning of words in the Armenian language.

Key words: *internal form of a word, external form of a word, semantic motivation, structural motivation, motivating feature, demotivation, semantic shifts of vocabulary, simplification and re-decomposition.*

References

- Ačaryan H., *Hayeren armatakan bararan*, Erevani hamalsarani hratarakč'ut'yun, ht. I, Erevan, 1971, eǵ 149 (in Armenian).
- Ačaryan H., *Hayeren armatakan bararan*, Erevani hamalsarani hratarakč'ut'yun, ht. IV, Erevan, 1979, eǵ 23 Ačaryan H., *Hayeren armatakan bararan*, Erevani hamalsarani hratarakč'ut'yun, ht. I, Erevan, 1971, eǵ 149 (in Armenian).
- Ačaryan H., *Hayeren armatakan bararan*, ht. III, Erevani hamalsarani hratarakč'ut'yun, Erevan, 1977, eǵ 278–279 (in Armenian).
- Aǵayan E., *Ardi hayereni bacatrakan bararan*, Erevan, 1976, eǵ 1356 (in Armenian).
- Aǵayan E., *Öndhanur ew haykakan baragitut'yun*, Erevani hamalsarani hratarakč'ut'yun, Erevan, 1984 (in Armenian).
- Bulakhovskij L. A., *Deǵtimologizacija v russkom jazyke // Istorija sovetskogo jazykoznanija. Khrestomatija*, izd. "Vysshaja škola", Moskva, 1988, s. 238 (in Russian).
- Bulakhovskij L. A., *Tipy deǵtimologizacii v russkom jazyke // Istorija sovetskogo jazykoznanija. Khrestomatija*, Moskva, 1988, ss. 242–246 (in Russian).
- Č'ahukyan G., *Hayeren stugabanakan bararan*, "Asoghik" hratarakč'ut'yun, Erevan, 2010, eǵ 516 (in Armenian).
- Č'ahukyan G., *Žamanakacic' hayereni tesut'yan himunk'nere*, Haykakan SSH Gitut'yunneri akademiayi hratarakč'ut'yun, Erevan, 1974, eǵ 150 (in Armenian).
- Čančina A. V., *Sinkhronnyj i diakhronnyj podkhody k izučeniju slov s desemantizirovannym kornem // Vestnik Nižegorodskogo un-ta im. N. I. Lobačevskogo*, 2008, № 4, ss. 193–196 (in Russian).
- Kubryakova E. S., *Osnovy morfologičeskogo analiza: na materiale germanskikh jazykov*, Moskva, 2008 (in Russian).
- Kubryakova E. S., *Tipy jazykovykh značenij. Semantika proizvodnogo slova*, izd-vo "Nauka", Moskva, 1981 (in Russian).
- Łazaryan R., *Grabari bararan*, EPH hratarakč'ut'yun, Erevan, 2000, eǵ 498 (in Armenian).
- Luk'janov N. A., *Narušenje semantičeskoj sootnositel'nosti meždú proizvodnymi i proizvodjaščimi slovami // Aktual'nye problemy leksikologii (doklady 2-j lingvističeskoi konferencii)*, Novosibirsk, 1969, ss. 17–25 (in Russian).
- Malkhasyan S., *Hayeren bac'atrakan bararan*, ht. 3, Haykakan SSR petakan hratarakč'ut'yun, Erevan, 1944, eǵ 166 (in Armenian).
- Maslova-Lašanskaja S. S., *Leksikologija švedskogo jazyka*, Izdatel'stvo Leningradskogo universiteta, Leningrad, 1973 (in Russian).
- Nor bargirk' haykazean lezui*, Erevani hamalsarani hratarakč'ut'yun, ht. II, Erevan, 1981, eǵ 952.
- Potebnja A. A., *Polnoe sobranie sočinenij*, tom I, Odessa, 1922 (in Russian).
- Sukiasyan A., *Žamanakacic' hayoc' lezui*, EPH hratarakč'ut'yun, Erevan, 1999, eǵ 102 (in Armenian).
- Toropcev I. S., *Leksičeskaja motivirovannost' (na materiale russkogo literaturnogo jazyka) // Orlovskij gosudarstvennyj pedagogičeskij institut. Učenyje zapiski*, tom XXII, Orel, 1964, st. 134 (in Russian).
- Žamanakacic' hayoc' lezvi bac'atrakan bararan*, ht. 3, Haykakan SSH GA hratarakč'ut'yun, Erevan, 1974, eǵ 412 (in Armenian).